# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/117» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաբաջանյան, Է. Ավագյան, Ռ. Կարապետյան, Ս. Բադալյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյան

### 1. Հայտերի բացման մասին

1.1. Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2018 թվականի օգոստոսի 9-ին, ժամը 11:00-ին, Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/117» ծածկագրով բաց մրցույթի հրավերին էլեկտրոնային համակարգով /www.armeps.am/ առցիծ հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | «Լաճ Գրուպ»ՍՊԸ |
| 2 | «Լամեքս» ՍՊԸ |

### 2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

**ՀՀ դրամ**

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գին | «Լաճ Գրուպ»ՍՊԸ | «Լամեքս» ՍՊԸ |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ------------- |
| 1 | Ինստալացիա 1 | 2000000 | -------------- | 2200000 |
| 2 | Ինստալացիա 1 | 1500000 | -------------- | 2200000 |
| 3 | Ինստալացիա 1 | 1500000 | -------------- | 2200000 |

«Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկներում կան թվաբանական անճշտություններ:

«Լաճ Գրուպ»ՍՊԸ-ի կողմից armeps էլեկտրոնային համակարգում կցված չեն պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

### 3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

3.1 «Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված յուրաքանչյուր բացված հայտում պահանջվող փաստաթղթերը առկա են,

3.2. «Լաճ Գրուպ»ՍՊԸ-ի կողմից բոլոր չափաբաժինների մասով կցված փաստաթղթերը ներբեռնված չեն armeps էլեկտրոնային համակարգում:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.3 «Լամեքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին անհամապատասխան՝ գնային առաջարկներում կան թվաբանական անճշտություններ՝ այն է, բոլոր չափաբաժինների համար գնային առաջարկի արժեքը, ԱԱՀ-ն և ընդհանուր գինը ներկայացված է նույն թվով՝ 2200000 ՀՀ դրամի չափով, որը հակասում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

3.3 Հաշվի առնելով արձանագրության 3.2 և 3.3 կետերով արձանագրված խախտումները՝ գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով գնման ընթացակարգի հրավերի 7.2 կետով, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով և 41-րդ կետով որոշեց բոլոր չափաբաժինների չափաբաժնի մասով մերժել մասնակիցների հայտերը, ինչպես նաև հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունել որոշում՝ կողմ-5, դեմ-0

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի Նախագահ՝ | ------------------------------------ | Հ. Պետրոսյան |
| Անդամներ՝ | ------------------------------------ | Հ. Բաբաջանյան |
| | ------------------------------------ | Է. Ավագյան |
| | ------------------------------------ | Ռ. Կարապետյան |
| | ------------------------------------ | Ա. Հովհաննիսյան |
| Քարտուղար՝ | ------------------------------------ | Գ. Մուրադյան |